

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ուսուցչի թափուր տեղերի համար «ՀՀ Արարատի մարզի Արարատ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի՝ մաթեմատիկա-50 ժամ, ինֆորմատիկա-12 ժամ, ֆիզկուլտուրա-10 ժամ, քիմիա-16 ժամ, աշխարհագրություն-15 ժամ, կենսաբանություն- 6 ժամ, բնագիտություն- 2 ժամ:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),

2. Փաստաթուղթ (դիպլոմ) §Հանրակրթության մասին՝ ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի որակավորման վերաբերյալ:

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (Ձև 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար 3x4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 4-ից մինչև հոկտեմբերի 17-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00, բացի շաբաթ կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումն կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 19 -ին, ժամը՝ 14:00-ին, Արարատի մարզի Արարատ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Արարատ Իսակովի 2:

Տեղեկությունների համար զանգահարել 094-34-90-76 հեռախոսահամարով:

**Արարատի մարզի Արարատ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի**

**Հե՝ 900428000179**

**Կենտրոնական գանձապետական հաշիվ**

**հվհհ – 04103892**